

# Մ. Տամատյանի կյանքն ու գործունեությունը (նախակուսակցական փուլ)

Մարգարիտ Ս. Թ.

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)  
sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ Միհրան Տամատյան, Օսմանյան կայսրություն, ազգային-ազատագրական պայքար, Ռամկավար-ազատական կուսակցություն, սփյուռքահայ մամուլ

## Жизнь и деятельность М. Таматяна (предпартийный этап)

Саргсян С. Т.

Институт истории НАН РА (Ереван, Армения)  
sargsyansuren@yandex.ru

**Аннотация:** Мигран Таматян - один из самых ярких представителей первого поколения армянской национально-освободительной борьбы. Человек-гражданин, в лице которого сочетались теоретик-идеолог, организатор и боец, сражающийся с оружием. Фигура, которая вместе со своими верными современниками смогла без страха и без колебаний выступить против такой сверхдержавы как Османская империя, чтобы бороться за свободу своего народа.

У М. Таматяна был трезвый ум, большое сердце и чувствительная душа, которые были объединены в человеке с прекрасным, сочувствующим мужским физическим телом. Его жизнь и патриотическая деятельность могут быть полностью представлены только путем объединения постов и их глубокого анализа. На допартийной стадии деятельности М. Таматяна происходили события, которые обусловили и стали основой его дальнейшей революционной деятельности.

**Ключевые слова:** Мигран Таматян, Османская империя, национально-освободительная борьба, Партия Рамкавар Азатакан, пресса армянской диаспоры

## M. Tamatyan's life and activities (pre-party stage)

Sargsyan S. T.

Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)  
sargsyansuren@yandex.ru

**Abstract:** Mihran Tamatyan is one of the brightest representatives of the first generation of the Armenian national liberation struggle. A man-citizen, in whose person the theorist-ideologue, the organizer and the fighter fighting with a weapon were summed up. A figure who, together with his faithful contemporaries, was able to rise up against the super-powerful Ottoman Empire without fear and without hesitation fight for the freedom of his own people.

M. Tamatyan had a sober mind, a big heart and a sensitive soul, which were combined in a man with a beautiful, sympathetic masculine physical body. His life and patriotic activities can be fully presented only by combining the posts and analyzing them in depth. In the pre-party stage of M. Tamatyan's activity, events took place, which conditioned and became the basis for his further revolutionary activity.

**Keywords:** Mihran Tamatyan, Ottoman Empire, national liberation struggle, Ramkavar Azatakan party, press of the Armenian diaspora

XIX դարի վերջին քառորդին երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը խիստ թուլացել էր: Եվրոպական երկրների արևելյան քաղաքականության մեջ դեպի հարավ՝ դեպի տաք ջրեր ոռուսական առաջնադաշտման դեմ հուսալի պատվար համարվող «տարբեր ռասաների հավաքածու» [1, էջ 222] կայսրությունում այդ երկրների թելադրանքով իշխանություններն իրավիճակը շտկելու համար միշտ միջոցառումներ ձեռնարկեցին: Սակայն

դա գրեթե անհնարին էր «միջնադարյան մակարդակում» [2, էջ 173-174] մնացած թուրքերի դեպքում: Բարենորոգչական այդ ծրագիրը՝ օսմանիզմը, որը ձևակերպված էր 1869 թ. սուլթան Աբդուլ Ազիզին թողած Ֆուադ փաշայի կտակում, իրենց հայրերի գործած սխալները (քրիստոնյաներին չոչնչացնելը) շտկելու և հպատակներին թուրքացնելու նպատակ ուներ, ավարտվեցին անհաջողությամբ:

1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմից հետո Եվրոպայից դուրս մղվելով թուրք կառավարողներն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին կայսրության արևելյան հատվածի (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի) վրա: Հայ մարդու աշխարհը նկալումն ու հոգևոր արժեքների համակարգն աստիճանաբար սկսեցին վերափոխվել: Սկսված շարժումն ուներ **սոցիալական-ազատագրական բնույթ** և ձգում էր նախ և առաջ վերականգնել հայ մարդու արժանապատվության զգացումը: Իսկ բնույթով այն սկզբում բարեշրջական էր (ուժորմիտական), և այն համաժողովրդական չբարձավ, այլ եղավ ու մնաց մտավորական վերնախավի մտածելակերպի և ճիգերի մակարդակում: Շատ դեպքերում էլ այն պայմանավորվեց արտաքին գործոնների ընթացքով և մշտապես կախյալ մնաց դրանից:

Սկսված ազատախոհական խլրտումներն աստիճանաբար վերաձեցին ազգային-ազատագրական պայքարի: Ուժերը խիստ անհավասար էին: Հայերի հույսը Եվրոպական երկրների օգնությունն էր, սակայն նրանք չարաշար խարվել էին: Պայքարում զոհվում էին հայության լավագույն ուժերը, իսկ արդյունքում բացի բարոյահոգեբանական հերթական հաղթանակներից ու ոգևորությունից, օգուտներ գրեթե չունեցանք: Իսկ պայքարի դեկավարողների զգալի մասը հարմար տեղափորվելով թուրքական պառլամենտի փափուկ աթոռներին և խարվելով նրանց արևելյան մեղրածոր խոստումներին, մոռացան թշնամանքն էլ, թուրք-քրդական տմարդի վայրագություններն էլ: Ամենացավալին այն եղավ, որ արդյունքում արևմտահայությունը կորցրեց իր զգնությունը, մսխեց մեծ թվով զոհերի գնով Երկիր մտցրած զենք-զինամթերքը և անհամար զոհեր տվեց եղենի ժամանակ:

Հայ ազգային-ազատագրական պայքարի խանձարուր Սահմանադրական շարժումն արևմտահայությանն իր ուժերի նկատմամբ վստահություն ներշնչեց և փոփոխության պահանջ առաջացրեց:

Գաղափարախոսական այդ շարժմանը հաջորդեցին Զեյթունի 1862 թ. Ապստամբությունը որպես առաջին զինված պայքարի դրսնորում և Հայկական հարցի միջազգայնա-

ցումը, որոնք նպաստեցին սկսված պայքարի հետագա խորացմանը: Հատկապես շրջադարձային եղավ Բերլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որը «Հայոց համար իրաւունք մը, Թուրքիոյ համար պարտաւորութիւն մը եւ Երոպայի համար՝ պարտականութիւն մը կը ներկայացնէր» [3, էջ 325]:

Բերլինի խարեւությունից հետո, 1880-ական թթ. սեփական ուժին կորնելու գաղափարներով տողորված արևմտահայ այդ շարժումը թևակոխեց կազմակերպական շրջափուլ: Ոգևորում էր նաև բալկանյան ժողովուրդների օրինակը: Պայքարում զուգահեռ տիրապետող էին երկու մտայնություն: Նախ՝ կրթել, լուսավորել ժողովրդին, ապա՝ պայքարել նրա ազատության համար:

Հատկապես զավառահայությանը լուսավորելու, աշխարհիկ դպրոցներ բացելու և արտագաղթը կանխելու նպատակով ստեղծվեցին ընկերություններ, որոնցից բեղուն գործունեություն ծավալեց «Միացեալ ընկերութիւնը հայոց»-ը [4]:

Բացվեցին նոր դպրանոցներ և կրթության գործն աշխարհականանցավ: Վանական վարդապետին փոխարինելու եկավ եվրոպական համալսարաններում կրթություն աշխարհիկ վարժապետը: Արդյունքում մեծացավ մի սերունդ, որն այլևս գրագետ էր և տեղյակ եվրոպաներում ընթացող հեղափոխական-ազատագրական ոգորումներին: Կործանման եզրին հասած հայ ժողովուրդը Ս. Խրիմյանի «Երկաթե շերեփի» քարոզ-կոչից հետո, ոտքի ելավ ազգային-ազատագրական պայքարի որը «հեղափոխություն» ինքնանվանվեց:

\*\*\*

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունը հարուստ է ազատամարտիկ-գործիչների անզուգական կոհորտայով: Այդ շարժման առաջին սերնդի ամենավառ ներկայացուցիչներից մեկը Միհրան Տամատյանն է: «Ճգնեցեք,-իրավամբ գրում է Վ. Ղազարյանը,-զրել պատմութիւնը 19-րդ դարու աւարտին եւ 20-րդ դարու սկիզբը Արևմտահայաստանի ու Կիլիկիոյ մեջ ծառալած ազգային ազատագրական շարժումներուն: Զեր դիմաց պիտի գտնեք անպայման Տամատյանը՝ իբրեւ արձանացեալ խորհրդանիշը մտաւորական հեղափոխականի եւ աննահանջ կազմակեր-

**պիշը դիմադրական թէ կամատրական շարժումներու» [5; 6, էջ 7]:**

Մարդ-քաղաքացի, ազգային-ազատագրական պայքարի լուսավոր դեմքերից, ի դեմս որի նույն անձի մեջ ամփոփված էր տեսաբան-զաղափարախոսը, կազակերպիչն ու զենքը ձեռքին մարտնչող ազատատենչ մարտիկը: «Անկասկած որ այսօր աշխարհն աւելի լաւ պայմաններու մեջ պիտի գտնուէր, - իրավացիորեն գրում է ՌԱԿ նշանավոր գործիչ Բարունակ Թովմայանը, - եթէ Տամատեանի արժանիքներով օժտուած մարդոց թիւը ըլլար մեծ: Արդարեւ անոր կեանքի փիլիսոփայութեան մեջ տիրապեսող տարրը մարդկայնութիւնն էր» [7]:

Գործիչ, ով առանց երկնչելու կարողացավ իր հավատավոր սերնդակիցների հետ անվարան դրւս գալ գերհզոր Օսմանյան կայսրության դեմ և առանց երկնչելու պայքարել սեփական ժողովրդի ազատության համար: Խոսել «անցեալ դարու 90ական թուականներէն,-իրավացիորեն նշում է Ս. Տամատյանի ժամանակակիցը,- մինչեւ ներկայ օրերու արեւմտահայ ազգային-քաղաքական և այլ հասարակական շարժումներու և մեր պատմութեան սա վերջին վարչուն տարիներու ազատագրական, հասարակական և մտատրական բովանդակութիւն տուող ռահվիրաներու փաղանգեն վերջին յամեցող» [8] Ս. Տամատյանի կյանքի ու կատարած ազգանվեր բազմաբեղուն գործունեության մասին, փորձել ճշտել նրա կատարած դերակատարության տարողությունը, ուղակի անհնարին կիխնի առանց համադրելու և խորությամբ դրանք վերլուծելու: Ավելին, պատմական հեռվից Ս. Տամատյանի գործունեության ամբողջական նկարագիրը վերհանման ու առանց որևէ բացթողման ներկայացնելու «յանձնառութեան մը լրիւ աւարտումը դժուար թէ յաջողուի որեւէ մէկուն կողմէ» [8]:

Ս. Տամատյանը նախ և առաջ հայ մարդ էր, իր ժողովրդի իսկապես արժանավոր զավակը, որը երիտասարդ «տարիքէն մինչեւ ալեհեր տարիքը ցուցաբերեց ամբողջական նուիրում, հաւատք մեր ժողովուրդի պայծառ ապագային հանդեպ» [7]: Ուներ սրափ միտք, մեծ սիրտ և զգայուն հոգի, որոնք համադրված էին գեղեցիկ, համակրելի առնական

ֆիզիկական կազմվածքի տեր մարդու մեջ: Նա հայ ազատագրական շարժման այն սակավաթիվ ռահվիրաներից էր, որ այդ շարժմանն ու ինքնիրեն հավատարիմ մնաց մինչև իր վերջին շունչը: Նա քննող, քննադատող, խորաթափանց և գործնական մտքի տեր հեղափոխական գործիչ ու կազմակերպող դեկավար էր: Անկաշառելի նկարագրով ուղղամտության, պարկեշտության և ձշմարտության ջատագովն էր, անշահախնդիր ու «անանձնական նուիրումով ազգային կուսակցական օժտուած դեկավար: Տիպար հայրենասէր մը, մեր ազատագրական շարժման ճիշդ ուղին ըմբռնող և զայն գործադրող» անձնավորություն [7]: Ս. Տամատյանի կյանքը լեցուն էր սիրանքներով: Նա ամբողջովին ու անսակարկ նվիրված էր ազգին ու հայրենիքին: Ազատագրական շարժման նվիրյալը տոկուն նկարագրով, իմաստնությամբ, արդարամիտ ու քաջակերով իսկական հեղափոխական էր, քաղաքական գործիչ, զաղափարախոս, հայրենասէր ու մտավորական: Ժամանակակիցները միաձայն նշում են, որ նա գերազանցապես գործի մարդ լինելով հանդերձ նաև պերճիս էր, խոսքի ու գործի վարպետ:

Միհրան Տամատյանը Ազգային սահմանադրության հասակակիցն էր, ծնվել է 1863 թ.<sup>1</sup> Պոլսում, կաթոլիկ հայի ընտանիքում: Հայրը՝ Սերովը՝ Տամատյանը եղել է նկարիչ - ծեփագործ: Մոր անունը Թագուհի էր: Մեկ եղբայր<sup>2</sup> ուներ և երեք քույր: Նախնական

<sup>1</sup> Ս. Տամատյանի մասին առկա հուշագրական գրականության մեջ և ուսումնասիրություններում նրա ծննդյան թվականի մասին տարակարծություն կա: Ս. Տամատյանին նվիրված միակ աշխատության հեղինակ և նրա կենսագիր Պ. Տեփոյանը նշում է 1863 թ.: Խսկ Վաչե Ղազարյանի խմբագրությամբ և առաջարանով լրաց տեսած «Բմ յուշերէս» ինքնակենսագրական հուշագրության մեջ, «Արեւ» թերթի Ս. Տամատյանին նվիրված մի քանի հրապարակումներում (տես «Արեւ», թ. 5630, 1937, 18.08.1945 և այլն) և Ս. Յափուճյանի Ս. Տամատյանի մասին հրապարակված երկերի մասին գրախոսականներում նշում է 1864 թվականը: Անձնական դիտարկումների, համեմատությունների և վերլուծությունների արդյունքում հակված ենք կարծելու, որ ճիշտը 1864 թվականն է:

<sup>2</sup> Պ. Տեփոյանի վկայությամբ Տամատյանի եղբայրը՝ Տիգրանը, թեև որևէ կուսակցության չի հարել, սակայն տողորված է եղել հեղափոխական զաղափարաներով: Ապրել է բուռն, արկածալից կյանք և մահացել է Կ. Պոլսում 1916 թվականին [9, էջ 31]:

կրթությունը ստացել է Պոլսում, այնուհետև 1872-1880թթ. ուսումը շարունակել է Վենետիկի Սուրադ-Ռաֆայելյան վարժարանում, որտեղ «հայրենասէրն Հ. Ալիշանի մականին տակ, ինչպես Պեշիկթաշլեան, Արփիար Արփիարեան, Մատթեոս Մամուրեան, Տօբտ. Փեշտիմալճեան եւն» ստանում է հայրենասիրության դասեր, որոնք դարձան ապրելու կերպ և գործելու ուղեցույց ամբողջ կյանքի ընթացքում: Սուրադ-Ռաֆայելյան վարժարանում ուսանելու տարիներին Մ. Տամատյանը «Ալիշանեան կադապարումով կերտած հայրենասիրութեանը» գուգրնաց որոշ չափով հետևել էր նաև Եվրոպայում ընթացող ազատագրական շարժումներին և, բնականաբար, ազդվել դրանցից:

Վենետիկից վերադառնալով Մ. Տամատյանն ուսուցչություն է անում Կ. Պոլսի Միխիթարյան և հայ բողոքականների Հայկյան ու Սուրենյան վարժարաններում, այնուհետև Բերայի Նարեկյան վարժարանում: 1882թ.-ին Հայոց Միացյալ ընկերության կողմից որպես ավագ ուսուցիչ ուղարկվում է Ադանայի Աբգարյան վարժարան: 1883 թ. Վեռադառնալով Պոլսի կրկին աշխատում է որպես ուսուցիչ Բոյուք-Դերեյի հայ կաթոլիկ վարժարանում:

Տատկանշական է, որ դեռ աշակերտական տարիներից Մ. Տամատյանը ոգևորվել է Հասունյան-Հակահասունյան եկեղեցական խնդրով, որն այդ ժամանակ նկատելիորեն հուզել էր Կ. Պոլսի ողջ հայությանը: Պոլսահայության առաջադեմ հատվածը սորբոնավարտ Հ. Շիշմանյան-Շերենցի գիլավորությամբ աշքի առաջ ունենալով հատկապես Լեհաստանի հայության կորուստի իրողությունը և գիտակցելով ազգային ուժացման վտանգը՝ հանդես էր գալիս դավանափոխության շատագով և հետադիմական ուժերի ու Վատիկանի անսքող դաշնության կամակատար, կաթոլիկ հայերի հովվապետ Անտոն Հասունյանի դեմ<sup>3</sup>:

Մ. Տամատյանի երիտասարդությունը համընկավ արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային արժեքների գնահատման և զարթոնքի իրադարձություններին, հասա-

րակական կյանքում ձևավորվող առաջադիմական և հետադիմական դիրքորոշումների և խմբակցությունների պայքարի ժամանակաշրջանին: Հայրենիքի ազատության նվիրյալի հեղափոխական գործունեությունը կարելի բաժանել երկու կարևորագույն ժամանակահատվածների՝ **նախակուսակցական** և **կուսակցական**: Ըստ որում, առաջին շրջանում նրա գործունեության հիմնական էությունը Արևմտյան Հայաստանի և Կ. Պոլսի տարբեր վարժարաններում մանկավարժական գործունեությանը զուգընթաց քարոզչական-կազմակերպական և հայության կյանքում եղած թերությունների ու հարստահարությունների լուսաբանումն էր. «Ուսուցիչ է պէտք հայկական մեջ տգիտութեան խաւարին գիրկը խարիսափող այս ժողովուրդին – ներկայ, կ'ըսէ երիտասարդ Տամատեանը և ձգելով գեղեցիկ Կ. Պոլսոյ անդորր ափունքը և հանգստաւէտ և ապահով կեանքը կը մեկնի Տարոն, կը մեկնի Կիլիկիա, հոն ուր կը կանչէ զինքը ձայնը պարտականութեան» [10]: Իսկ այնուհետև ժողովրդի գիտակցությանն այդպես այլևս շարունակել ապրելու անհնարինության գաղափարի սերմանումը, թուրքական իշխանությունների ապօրինի գործունեության և քրդական հրոսակների թալանչի-ական պահփածքի քննադատությունը:

1884 թ. Միացյալ ընկերության իրավերով իբրև Ներսիսյան դպրոցի տնօրեն-ուսուցիչ Մ. Տամատյանը, թողնելով օսմանյան մայրաքաղաքի հեշտ ու հաճելի կյանքը, մեկնում է Սուչ և լծում տարարապիստ հայության կրթական նվիրական գործին: Այստեղ նա աշխատում էր աշքի ընկնող հասարակական գործիներ Մկրտիչ Սարյանի և Մարկոս Նաթանյանի հետ: 1886 թ. նրանց ձերբակալությունից հետո Մ. Տամատյանը ստանձնում է Տուրութեանի և Վասպուրականի վարժարանների տեսուչի պաշտոնը, միաժամանակ հանդիսանալով Մշո Ներսիսյան ուսումնարանի և Ազգանվեր Հայուհյաց ընկերության Սուչի իգական վարժարանի տնօրենը: Դեռևս Վենետիկի Սուրադ-Ռաֆայելյան դպրոցում ուսանելու ընթացքում ալիշանյան ոռմանտիկ հայրենասիրությամբ տողորված և Եվրոպական ազատագրական

<sup>3</sup> Կ.Պոլսի հայությունը բաժանվել էր Հասունյանի կողմանակիցների և ընդդիմադիրների, որից էլ շարժումը ստացել էր Հասունյան-Հակահասունյան անվանումը:

գաղափարախոսություններից ազդված Մ. Տամատյանը 1884-1888 թթ. Մուշուս ուսուցիչ աշխատելու տարիներին տեսավ հայ ժողովրդի ծանր ու անտանելի վիճակը և ապրեց դրանով:

Սրտացավ հայրենասերն ու մարդասերը նաև հասկացավ, որ նախորդ դարերի նման առանց ընդվկելու ժողովուրդը շարունակում էր լուս կրել այդ ծանր լուծը և վերածվել էր կամազուրկ ամբոխի ու եզրակացրեց, որ հարկավոր է պայքարել և այն էլ զենքով: Կրթական խաղաղ աշխատանքի նվիրյալ երիտասարդն աստիճանաբար դարձավ «զինական ու քաղաքական» անզիջում պայքարի կազմակերպիչ և 1886-ից որդեգրեց հեղափոխության ուղին [11, էջ 153-154]:

Կարևոր է նաև, որ 1884-1888 թթ. Տարոն-Տուրուբերանում մանկավարժական գործունեության ընթացքում Մ. Տամատյանը աշխատանքին զուգընթաց իր մաշկի վրա զգաց և հնարավորություն ունեցավ մոտիկից ուսումնասիրելու հայ ժողովրդի իրավազուրկ ու հարստահարված ապրելակերպի հարվածները, տեսավ հայության գոյությանն սպառնացող իրական վտանգը և հասկացավ, որ հայությունն այդպես ընկածված ու խեղացած է ստացած մշտական ծանր հարվածներից: Որ տևական ժամանակ այլ ելք չգտնելով՝ ստիպված համակերպվել է այդ ստրկական վիճակին, դարձել կամազուրկ ամբոխի:

Հենց այստեղ էլ նրա մոտ հոգեկան մեծ հեղաշրջում է տեղի ունենում. մանկավարժական խաղաղ ու հանգիստ աշխատանքին նվիրված խանդավառ երիտասարդը հրաժարվում է իր նախասիրած ազգային կրթական գործին ծառայելուց և դառնում զինված ու քաղաքական պայքարի կազմակերպիչ ու անվախ մասնակից. «Տամատեան ազատագրական գաղափարներու խտացած և յստակապես ձեւաւրուած ողիին առաքեալն էր այլեւս» [8]: Այսինքն՝ արևմտահայ կյանքում սկսված ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլին, որը ենթադրում էր նախ սրափիվել դարավոր թմբիրից, լուսավորվել կրթվել և համախմբվել ազատագրական գաղափարների շուրջ: Այնուեւս աստիճանաբար փոխարինելու էր գալիս

երկրորդ՝ համախմբվելու, միակամվելու և ազատության դրոշը պարզելու փուլը: Այդ ակտիվ ու նպատակավաց գործունեության արդյունքում էր, որ ուսումն ու դաստիարակությունն աստիճանաբար աշխարհիկ դարձան, վանական վարդապետն սկսեց տեղը զիջեց վարժապետ՝ աշխարհիկ ուսուցչին: Փոխվեցին նաև դասավանդման մեթոդներն ու ուսուցանվող առարկաները, առաջադեմ դարձան ոչ միայն վարժապետներն ու ուսուցման ձևերը, այլև ամենի ինչից առաջ հենց ինքը՝ ուսուցանվողը, ով հետո պիտի փոխեր, նորացներ մյուսին, հաջորդին: Ի վերջո, պիտի փոխվեր հայության կյանքն ընդհանրապես, դարձերով գոյատևելու փոխարեն վերջապես հնարավոր դառնար ապրել մարդավայել:

Այդ եվլոյուցիայի արդյունքը եղավ ազգային-ազատագրական պայքարի երկրորդ՝ գաղափարաքարոզչական և պրակտիկ գործունեության պայքարի փուլը, որը համընկալ Մ. Տամատյանի կյանքի նոր՝ կտրուկ փոփոխության հետ և դարձակետ եղավ նրա ձակատագրում ու գործունեության մեջ. ուսուցչը՝ կրթական գործի մշակը, դառնում է ազատագրական պայքարի քարոզիչ և քիչ հետո նաև հեղափոխական գործի ու կազմակերպիչ [12, էջ 41 և 48]:

Մ. Տամատյանի այդ գաղափարական հեղաբեկումը տեղի ունեցավ 1886 թվականին: Հենց այդ ժամանակվանից էլ նա որդեգրեց հեղափոխականի ուղին, որոշելով առհավետ կյանքը նվիրել սեփական ժողովրդի ազատության վեհ գործին:

Արևմտյան Հայաստանում ստեղծված դժնդակ, անմարդկային և իրավական անարդարացի կացությունն այլևս հանդուրժել անկարող Մ. Տամատյանին չէին կարող շրջանցել նաև այդ շրջանի Տարոնի և Վասպուրականի հեղափոխական խմբումները: Ընդհանուր առմամբ ինքը՝ Մ. Տամատյանը, արևմտահայ ազգային-ազատագրական շարժման «յեղափոխական գաղափարին խանձարուր» երեք օջախ էր առանձնացնում և դրանք վառարաններ անվանում՝ Վանի, Կարինի և Բաղեշի (Մուշ, Սասուն)» վիլայեթները<sup>4</sup>: 1886 թ. նա մեկնում է

<sup>4</sup> Մ. Տամատյանը «վառարաններ» անվանելով արևմտահայ ազգային-ազատագրական շարժման երեք գլխավոր

Վան, որտեղ ծանոթանում է Ս. Փորթուգալյանի նախկին աշակերտների, ինչպես նաև Վանի ազատախոհ շրջանակների հետ. «Հոն, այն ատեն գոյութիւն ունեցող Արմենական կազմակերպութեան միանալով հայ ազատագրութեան շարժումին իր գործնական մասնակցութիւնը բերած է: Յետոյ Պոլիս վերադառնալով յիշեալ կազմակերպութիւնը զօրացնելու կ'աշխատեր» [13]: Ի դեպ, այս հետաքրքիր տեղեկությունը երբսէ չի շրջանառվել: Ավելին, հիշյալ հրապարակման մեջ նշվում է նաև, որ ոչ միայն Ս. Տամատյանն է եղել Արմենական կուսակցության անդամ, այլև՝ Մոլորդ. «Տամատեան և Մոլոր պատկանելով հանդերձ Արմենական կազմակերպութեան՝ միաժամանակ Աթենք հրատարակող նոր թերթ մը, «Հնչակ»ը կը ստանային» [13], որի «կուռ և դէպի յեղափոխութիւն հրավառ խմբագրականները» ավելի գրավիչ և սրտամոտ լինելով շուտով գրավում են նրանց և դարձնում իրենց հետևորդներ: Նշենք, որ Արմենական կուսակցության անդամ լինելու փաստին պետք է որոշ վերապահումով մոտենալ, քանի որ նա Վանում մնաց ընդամենը ութ օր և հազիվ թե հասցներ այն աստիճանի յուրացնել արմենականների գաղափարները, որ անդամազրվեր կուսակցությանը: Այլ ինտիմ է և հավանաբար այդպես էլ եղել է, որ հայ ազատագրական պայքարի նվիրյալը դառնար արմենականների համախոհը, համակիրն ու սատարեր նրանց:

Հետազայում անդրադառնալով այդ շրջանում Վանում տիրող հեղափոխական մրնոլորտին Ս. Տամատյանը նշում է, որ Վանն առանձնանում էր «պատրաստուած, զարգացած և եռանդուն» և մշտական փնտրութիւն ունենալով: Դրանց էլ քաղաքը «մշտական խառնարն մըն էր, բնականէն տրամադիր յեղափոխական ամենայանդուզն ձեռներեցութիւններու» [5, էջ 31], հետազայում վերիիշում է նա: Այնուհետև Ս. Տամատյանը նշում է, որ Վանում գործող Ս. Փորթուգալյանն ու նրա շուրջ համախմբված ուսուցիչները հեղափոխական գաղափար-

ներով տողորված կրակու հայրենասերներ էին, որոնք «քաջալերանը կը ստանային Խրիմեան Հայրիկէն» ում իրավամբ կարելի է նկատել իբրև հայ հեղափոխական շարժման նախակարապետն ու ռահվիրան:

Նրա մեծ ներդրումը հայոց վերազարթոնքի և նորովի մտածող սերունդ դաստիարակելու գործում բարձ գնահատելով հանդերձ Ս. Տամատյանը միաժամանակ նշում է, որ Ս. Փորթուգալյանն ու նրա համախոհները այնքան էլ խելամիտ չեն: Նրանք հաճախ գործում էին արարքներ, որոնք ավելի էին գրգորում, թշնամացնում թուրքերին: Այսպես, Վարժապետարանի մեջ բացահայտ կրակու հեղափոխական բնույթի ձառեր էին արտասանում, հայրենասիրական երգեր երգելով ու ազմական քայլարշավներ էին ձեռնարկում և նույնիսկ թուրքերի աչքի առաջ Այգեստանի «բացատներուն մէջ զինավարժութեան փորձեր անում» [5, էջ 31]: Վանում այդ «յեղափոխական գործունեութիւնը այնքան ցուցադրական բնույթ էր ստացել, որ չէր վրիփել կուսակալի ուշադրությունից անգամ» [5, էջ 31]: Վերջինս մի հայի ներկայությամբ ասել էր, որ ազատագրական շարժումը գաղտնի պետք է լինի և ոչ թե բացահայտ, «մանաւանդ ող հայերուն հանած աղմուկը աննպատակ երեւոյթ մըն է, տակը պարապ, որ Հայութեան գլխուն փորձանք կը բերէ» [5, էջ 31]:

Ի դեպ, Արմենական կուսակցության ծրագրի «Յեղափոխութեան ձամբով ապահովել հայ ժողովուրդի ինքնիշխանութիւնը» և այլ հավասարակշռված հիմնադրութները հուշում էին, որ այն ավելի շուտ ինքնապաշտպանական կամ «յեղափոխութեան պատրաստութեան» կազմակերպություն էր, քան թե ուղղակի հեղափոխական. «Արմենականութիւնը իր մէջ կ'ամփոփէր ե՛ յեղափոխականը, ե՛ կուլտուրական գործիչը: Ան կը հաւատար թե՛ աստիճանական խղաղ զարգացումին եւ թե՛ յեղափոխական գործելակերպին՝ զենքին» [14, էջ 80-81]: Ամենայն հավանականությամբ հենց արմենականների տեղացիներ լինելու կարևոր գործոնին ու այդ երկվությանը պետք է վերագրել նրանց որդեգրած այն խոհեմ դիրքը, որ նրանք դրսուրեցին 1894 թ. Տարոն-Սասունի հեղափոխական իրադարձությունների և 1896 թ. Վանի «Մեծ դեպքի» ժամանակ:

օջախ էր առանձնացնում: Դրանք էին Վանի, Վարինի և «Բաղէշի (Մոլոր, Սասուն)» վիլայեթները, որոնք «կարելի է նկատել յեղափոխական գաղափարին խանձարուրը»: [5, էջ 30]:

Այնուհետև Ս. Տամատյանը մի ուշագրավ դիտարկում էլ է անում նշելով, որ հատկապես կուսակցական պատմագրությունը «զրեյէ կ'աստուածացնէ» Ս. Փորթուգալյանին, այնինչ Վանից հեռանալուց և Մարսելում հաստատվելուց հետո «պրն. Փորթուգալեան արդէն յեղափոխական զինիին մէջ շատ ջուր խառնած էր», որի հետևանքով էլ «իր գործակիցներէն խումբ մը երիտասարդներ, բաժնուելով իրմէ, կը հիմնեն Հնչակեան Կուսակցութիւնը» [5, էջ 27]: Ավելացնենք, որ ընդհանուր առմամբ Ս. Տամատյանն իր հուշերում այնքան էլ նպաստավոր կարծիք չունի Ս. Փորթուգալյանի հայրենիքից հեռանալուց և Մարսելում հաստատվելուց հետո ծավալած գործունեության մասին: Սակայն նշենք, որ դա բոլորովին էլ չի ստվերում Ս. Փորթուգալյանի բերած մեծ նպաստը հայ ազգային-ազատագրական շարժմանը և նա իրավամբ եղել է այդ շարժման աննկուն ռահվիրաներից մեկը:

Այդ շրջանում Մուշում պաշտոնավարող ազատատենչ Ս. Տամատյանը բնականաբար պիտի բախվեր տեղի կառավարիչների հետ, քանի որ կուսակալ Արիֆ և Մուշի կառավարիչ Սալիհ փաշանները, Մշո սուրբ Կարապետի առաջնորդ եպիսկոպոս Արիստակես Դերձալյանը և հոչակավոր ավագակապետ Մուսա բեկը «կատարեալ աւագակախումբ մը կազմած սանձարձակ եւ բացէ ի բաց կը կողոպտէին ու կը կեղեքէին ժողովուրդը» [5, էջ 31]: Բանը հասել էր այնտեղ, որ ոչ միայն տեղի հայերը, այլև «Մուշի թուրքերն իսկ դժգոհ էին տիրող կացութենէն»:

Առանձնապես լարվածություն առաջացավ այն բանից հետո, եթե Ս. Տամատյանը կազմակերպեց տեղի հայերի միասնական բողոքը Մուսա բեկի դեմ: Հենց այդ շրջանից էլ Ս. Տամատյանն աստիճանաբար դահնում է Մուշի ազատագրական, հեղափոխական շարժման ամենաակնառու գործիչներից մեկը: Նրա գաղափարակիցներն ու աջակիցներն էին Հայրապետ Զանիկյանը (Մշո Ներսիսյան վարժարանի ուսուցիչ), Մուշի Ազգային Առաջնորդարանի քարտուղար Գեղամ Տարոնյանը: Տամատյանը բազում կողմնակիցներ ուներ նաև հասարակ ժողովրդի շրջանում [15, էջ 31]:

Ս. Տամատյանը շուտով տեղափոխվում է մայրաքաղաք և 1889-90 թթ. ուսուցչություն անում Պոլսի Օրթազյուղի հայ կաթոլիկ վարժարանում [16, էջ 33]: Վերադարձնալով Կ. Պոլսի Տամատյանն իրեն գտավ հարազատ միջավայրում՝ այնտեղ սկսվել էին հեղափոխական լուրջ խմբումներ: Հեղափոխական գաղափարներով տոգորված ուսուցիչը Կ. Պոլսում հարաբերություններ է հաստատում Համբարձում Պոյաձյանի (Մուրադ), Հարություն Ճանկույանի և նրանց հեղափոխական մյուս ընկերների հետ: Զեսավորվում է ազատության գործին նվիրյալների մի ընկերակցություն, որն այդ ժամանակ «Պոլսոյ ամենէն գործունեայ և եռանդուն խումբն էր» [11, էջ 153-154]:

Իր հուշերում խմբի նպատակի մասին խոսելով Տամատյանը գրում է. «Մեր նպատակն էր Արևմտահայաստանի և Կիլիկիոյ մէջ յեղափոխական գործունեութեամբ ապահովել Պերլինի դաշնագրով խոստացուած բարենորոգմանց գործադրութիւնը» [5, էջ 83]: Ս. Տամատյանը դա համարում է ազատագրական շարժման առաջին հանգրվանը: Հաջորդ խնդիրը ազգային անկախության ձեռքբերումն էր: Չեր դրվում դասակարգային խտրականության հարցը: Խմբի ծրագիրը Տամատյանի ասելով չի պարունակել որևէ տնտեսական կամ քաղաքական ուսմունք: Նրանք ազատագրված Հայաստանի քաղաքական կառուցվածքի հարցը առաջնահերթ չէին համարում [5, էջ 83]:

Տամատյանը գրում է, որ ի տարբերություն կովկասահայերի, որոնք ուսումնասիրում էին ընկերվարության ուսմունքը (սոցիալիզմ), արևմտահայ երիտասարդությունը «շատ քիչ գաղափար ուներ ընկերվարության վրա» [5, էջ 83]:

1889թ. վերջերին նորաստեղծ Հնչակյան կուսակցության կենտրոնի նորկայացուցիչները ժամանում են Կ. Պոլսի և բանակցում տեղի հեղափոխականորեն տրամադրված շրջանակների հետ: Այդ բանակցությունների արդյունքում Ս. Տամատյանն ընկերների հետ անդամագրվում են Հնչակյան կուսակցությանը: Հատկապես կուսակցական գրականության մէջ անդրադառնալով այս հարցին

շատ հեղինակներ<sup>5</sup> զարգացնում են այն տեսակետը, որ իբր բոլոր այդ գործիչները անվերապահորեն ընդունում ու որդեգրում են այդ կուսակցության գաղափարախոսությունն ու գործելաձերը: Մի բան, որն իրականության այնքան էլ չի համապատասխանում: Թե՛ Ս. Տամատյանը և թե՛ նրա ընկերներից շատերը կամ ընդհանրապես տեղյակ չեն կամ այնքան էլ լավ չեն հասկանում սոցիալիստական գաղափարախոսությունն ու նրա հիմնարրույթները: Պարզապես նրանց մտահոգում էր մեկ հիմնական հարց՝ հայ ժողովրդի վիճակն այլս անտանելի էր դարձել, որ հաստկապես գավառի հայությունը գտնվում էր անխուսափելի կործանման եզրին և ով պայքար կնախաձեռներ այդ խնդրի լուծման օգտին, նրանք կպաշտպանեին ու կծառայեին այդ ուժին: Նրանց համար բոլորովին կարևոր էլ չէր այդ ուժի անունը կամ ծրագրային դրույթներն ու թեզերը: Առավել ևս թե ինչ իզմի դաշտում են գտնվում նրանք: Ասվածի հաստատումն էր այն իրողությունը, որ գրեթե բոլոր հայաշատ վայրերում Հնչակյան կուսակցությունն սկզբնական շրջանում հաջողությամբ հիմնադրում էր իր տեղական կառույցները և որ կուսակցությունն աննախադեպ հաջողություններ արձանագրեց այդ ասպարեզում:

Հնչակյան կուսակցությանն անդամագրվելու պահից սկսվում է Ս. Տամատյանի հեղափոխական գործունեության երկրորդ կարևոր՝ կուսակցական փուլը, որը կներկացնենք հաջորդիվ:

## Օգտագործված գրականության ցանկ

1. **Еремеев Д. Е.**, Этногенез турок. – М., 1971.
2. **Чихачев П. А.** Великие державы и Восточный вопрос. – М., 1970
3. **Pastermajian Hrand**, Histoire de L'Arménie. –Փարիզ, 1964
4. Հիմնական կանոնագիր Միացեալ ընկերութեանց հայոց: –Կ.Պոլիս, 1880
5. **Տամատեան Մ.**, Իմ յուշերէս: –Պէյրութ, 1985
6. **Ղազարեան Վ.**, Երեւան ներածութիւն Կիլիկեան երազին նաւորդը
7. **Թովմասյան Բ.**, Միհրան Տամատեանի յուշագրութիւնը, ինչպէս սկսաւ եւ ինչու մնաց անաւարտ: // «Արեւ» թերթ, թիվ 15706
8. **Տեփոյեան Պ.**, Մեր մեծ ծերունին: // «Արեւ» թերթ, թիվ 8145
9. **Տեփոյան Պ.**, Միհրան Տամատեան (1863-1945): –Պէյրութ, 1964
10. **Գերբնատիր Ա. Յ.**, հայ մը, // «Արեւ» թերթ, թիվ 8145
11. «Դրօշակի» նամակը Ս. Տամատեանին, Ուստում Նամականի, մահուան վաթսունամեակին առջիւ, խմբ. Հր. Տասնապետեան: –Պէյրութ, 1979
12. **Սարգսյան Ա.**, «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014
13. «Արև», թերթ, թիվ 5630
14. **Ոռոքեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Բ. Հատոր: –Պէյրութ, 1973
15. **Տասնապետեան Հ.**, Հայ յեղափոխական շարժումը մինչեւ Հ.Յ. Դաշնակցութեան կազմութիւնը: –Վթենք, 1990
16. **Տեփոյեան Պետրոս Յ.**, Միհրան Տամատեան (1863-1945): –Պէյրութ, 1964

Сдана/Հանձնվել Է 3.06.2020  
Рецензирована/Գրախոսվել Է 5.06.2020  
Принята/Հնդունվել Է 8.06.2020

<sup>5</sup> Գրեթե բոլորը, որի պատճառով էլ ձեռնպահ ենք մնում ազգանուններ և աշխատությունները նշելուց: